ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«18» Ապրիլի 2012թ. N -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԿԱՐԼԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ՀԽՍՀ արդյունաբերական շինարարության նախարար Կարլեն Հակոբյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Բաղրամյան պողոտայի 1-ին անցուղի, շենք-1 հասցեում տեղադրելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԿԱՐԼԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման համար հիմք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարի 24.05.2011թ. հ.ՊՆ/510-Հ-260, Հայաստանի ճարտարապետների միության 09.06.2011թ. հ.ՄՄ 01/02 գրություն-միջնորդագրերը, ինչպես նաև Կարլեն Հակոբյանի ներդրած ավանդը շինարարության բնագավառում։

1965-75թթ. Երքաղխորհրդի պատգամավոր։

Կարլեն Հակոբյանը 1970 թվականին նշանակվել է ՀԽՍՀ Շինարարության մինիստրի տեղակալ, 1972թվականին՝ մինիստր։

1975-80թթ. Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր։

1988թ. նշանակվել է «Հայռեստավրացիանախագիծ» ինստիտուտի տնօրեն։

1992թ.- ՀՀ Պաշտպանության նախարարության Կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման գլխավոր վարչության պետ։

1997թ.՝ ԿՇ և ԶԲ վարչության պետի տեղակալ, շտաբի պետ։

Կարլեն Հակոբյանի անմիջական ղեկավարությամբ կառուցվել է Երևանի պետական համալսարանի կենտրոնական մասնաշենքը, հեռուստատեսային ստուդիան և նոր հեռուստաաշտարակը, ԳԱԱ նուրբ օրգանական քիմիայի համալիրը, Բիոքիմիայի ինստիտուտի շենքը, Կարդիոլոգիայի ինստիտուտը, «Դվին» հյուրանոցը և այլն։

Կարլեն Հակոբյանը պարգևատրվել է «Պատվո նշան», «Աշխատանքի արիության համար», «Բաղրամյանի անվան», ՀՀ Պաշտպանության նախարարության 1–ին և 2-րդ աստիճանի մեդալներով։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԿԱՐԼԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կարլեն Հակոբյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԿԱՐԼԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կարլեն Հակոբյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ